

Հ.Հ Արմավիրի մարզի Հայկական գյուղական համայնքի
ղեկավար՝ Ռ. Ղազարյանի 2015 թվականի առաջին կիսամյակում կատարած
աշխատանքների
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ Հ.Հ Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Ծ. Գրիգորյանի, համայնքի ավագանու անդամների և 65 համայնքի բնակիչների.

17.07.2015թ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկական գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը համայնքի ազգաբնակչության կենսամակարդակի բարցրացումն է, որին հասնելու համար սահմանվել են կարևորագույն խնդիրներ, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2015թվականի առաջին կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ նթերքների իրացմանը: Հետևողական աշխատանք է տարվել ոռոգման ջրի մատակարարման համար, որի արդյունքում Հայկական համայնքում ոռոգման ջրի հետ կապված խնդիրներ չեն առաջացել: 2015թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության Կառավարության աջակցությամբ Հայկական համայնքում վերագործարկվել է 1 խորքային հոր, որը օգտագործվելու է ոռոգման նպատակով: